

ՊԱՏՏՕՆԱԿԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Նոյեմբ. 1. թ. 2033. Առաջադրուեց Վրաստանի և Իմերէթի Հայոց թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Եփրեմ եպիսկոպոսին տնօրինելու, որ Գանձասարի պետական դպրոցների հայ աշակերտ-աշակերտուհիները հայ եկեղեցի տարուեն կայսերական տօներին։

Նոյեմբ. 1. թ. 2034. Առաջադրութեամբ թոյլ տրուեց Երևանի Փոխ-Թեմական Տ. Խորէն եպիսկոպոսին Նոր-Բայազէտի գործակալ կարգել Արտակ վարդապետին։

Նոյեմբ. 3. թ. 2039. Առաջադրուեց Մայր Աթոռի Մատենադարանապետ Տ. Մեսրոպ եպիսկոպոսին, Հայրապետական գիւանի գործերը, որ գտնուում են Ճեմարանում, առանալ և պահել Մատենադարանում։ № 2040. Ճեմարանի վարչութեան, յիշեալ գործերը յանձնելու Մատենադարանապետին։

Նոյեմբ. 10. թ. 2058. Օրհնութեան թուղթ Ալէքսանդրոպոլի Սահականուշեան օրիորդաց եկեղ. ծխ. դպրոցի աւագ վարժուհի Տիկ. Նատալիա Տէր Մարտիրոսոնի անունով հայ եկեղ. դպրոցներում նրա արդիւնաւոր պաշտօնէութեան 25 ամեայ յոբելեանի առիթով։

Նոյեմբ. 15. թ. 2068. Առաջադրութեամբ ուղարկուեց Մայր Աթոռի Մատենադարանապետ Տ. Մեսրոպ եպսին. Սևանի անապատի երեք արկղ գրքերը պատուիրելով խնամքով պահպանել յանուն անապատի առանձին պահարանում։

Նոյեմբ. 15. թ. 2069. Առաջադրուեց Տպարանի Վարչութեան Սևանի վանահայր Տ. Սարգիս եպսի. խնդրած գրքերն ուղարկել նրան ցուցակի համեմատ։

Նոյեմբ. 21. թ. 2091. Առաջադրութեամբ յանձնուեց Սինոդին Մայր Աթոռիս Կ. Պոլսոյ գանձապահ պ. Բարսեղ Իսթամպոլլուեանի ուղարկած գանձանակագրամի հաշուում 109—10 կոպ. բանկային կտրոնը թ. 2092. այս մասին տեղեկութիւն տրուեց պ. Բ. Իսթամպոլլուեանին Կ. Պոլսոյ Հայոց պատր. Սրբազան Տեղապահի անունով գրութեամբ։

Նոյեմբ. 24. թ. 2103. Առաջադրութեամբ, հրաժարուած Տ. Ներսէս վրդպտ. Մելիք-Թանգեանի տեղ. կաթուղիկոսական ընտրութեան պատգամաւորներին ընդունող յանձնաժողովի անդամ կարգուեց Տ. Արիստակէս վրդպ. Զուլոյեանը։

ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Նոյեմբեր 2. թ. 732. Սինոդը լսեց Ամենապատիւ Տ. Տեղակալի անցեալ հոկտեմբերի 8-ի №1967 առաջադրութիւնը Եղիշէ վարդապետ Ահարոնեանին Նուխու վիճակի փոխանորդ նշանակելու մասին. որոշեց. նախ՝ Տ. Եղիշէ վարդապետ Ահարոնեանին տալ 1910 թ. դեկտեմ-